Ես՝ ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության դատախազ Ա.Խաչատրյանս, ուսումնասիրելով Ճապոնիայի իրավասու մարմիններին հասցեագրված՝ թիվ 58213321 քրեական գործով իրավական օգնություն ցույց տալու մասին միջնորդության վերաբերյալ փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

Թիվ 58213321 քրեական գործի նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել դիմել Ճապոնիայի իրավասու մարմիններին քրեական գործով իրավական օգնություն հայցելու մասին միջնորդությամբ: Այդ կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազությունում ստացվել է ՀՀ ՔԿ 01.03.2022թ. գրությունն ու ճապոներեն թարգմանված՝ քրեական գործով իրավական օգնություն հայցելու մասին միջնորդությունը:

ՀՀ իրավասու մարմիններին քրեական գործով իրավական օգնություն հայցելու մասին միջնորդությունները ՀՀ իրավասու մարմնի կողմից ուղարկվում են միջազգային իրավունքի «Բարի կամքի» և «Փոխադարձության» սկզբունքների հիման վրա: ՀՀ իրավասու մարմինների հետ քրեական գործերով իրավական օգնության ոլորտում համագործակցելու ընթացքում Լիբանանյան կողմը պահանջում է իրեն հասցեագրված միջնորդություններն ու կից փաստաթղթերն ուղարկել ճապոներեն թարգմանությամբ:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ՀՀ ՔԿ-ից ստացված թիվ 58213321 քրեական գործով իրավական օգնություն հայցելու մասին ճապոներեն թարգմանված միջնորդության անհրաժեշտ է կցել Ճապոնիայի իրավասու մարմիններին հասցեագրած ՀՀ գլխավոր դատախազության կից գրության ճապոներեն թարգմանությունը, իսկ ՀԱՍՄԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆԸ համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատականի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 58213321 քրեական գործով Ճապոնիայի իրավասու մարմիններին հասցեագրած ՀՀ գլխավոր դատախազության գրության ճապոներեն թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել ՀԱՍՄԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ (ՀՀ ID CARD 5209920585, ՀՀ Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահամասարակազմական համալսարան՝ տրված 01.07.2014թ.) և

նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:
3. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի համաձայն՝ առանց դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի թույլտվության՝ նախաքննության կամ հետաքննության տվյալները հրապարակելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով:


ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության դատախազ



Ա. Խաչատրյան

Սրացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պարասխանալուծության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝
«01» մարտի 2022թ.



ՀԱՍՄԻԿ ԳԱՄՊԱՐՅԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

թարգմանիչ հրավիրելու մասին

25-ը մարտի 2022թ.

ք.Երևան

«Ա. գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ, արդարադատության առաջին դասի խորհրդական Մ.Հակոբյանս, ուսումնասիրելով Սահդ Ալի Ասդարի Շահբամանիի վերաբերյալ «Ա պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչությունից մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 84103621 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի՝

2022 թվականի մարտի 25-ին «Ա գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությունում մեղադրական եզրակացությամբ ստացվել է «Ա պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության 3-րդ բաժնում քննված թիվ 84103621 քրեական գործն ըստ մեղադրանքի Սահդ Ալի Ասդարի Շահբամանիի՝ «Ա քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 267.1-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով:

Նույն օրը որոշում է կայացվել թիվ 84103621 քրեական գործով մեղադրական եզրակացությունը հաստատելու մասին:

«Ա քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«Քրեական դատավարությանը մասնակցող անձինք, բացառությամբ քրեական վարույթն իրականացնող մարմնի, իրավունք ունեն դատարանում հանդես գալու իրենց նախընտրած լեզվով, եթե ապահովվում են հայերեն թարգմանությունը: Քրեական դատավարությանը մասնակցող մեղադրյալին, եթե նա չի տիրապետում հայերենին, դատարանը պարտավոր է պետական միջոցների հաշվին ապահովել թարգմանչի ծառայություններով, բացառությամբ երբ մեղադրյալը ցանկանում է իր հաշվին ապահովել թարգմանությունը»:

«Ա քրեական դատավարության օրենսգրքի 277-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

«Քրեական դատավարության լեզվին չտիրապետող մեղադրյալին և պաշտպանին ունենվում են թարգմանչի կողմից ստորագրված մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների հաստատված թարգմանությունները»:

Նկատի ունենալով, որ սույն քրեական գործով մեղադրյալ Սահդ Ալի Ասդարի Շահբամանին հայերենին չի տիրապետում, այլ տիրապետում է պարսկերենին և իր հաշվին թարգմանություն ապահովելու ցանկություն չի հայտնել, ուստի քրեական գործով կազմված մեղադրական եզրակացությունը՝ կից հավելվածներով, և այն հաստատելու մասին որոշումը հայերենից պարսկերեն թարգմանելու ու մեղադրյալին հասկանալի լեզվով նրան հանձնելու նպատակով անհրաժեշտ է որպես թարգմանիչ հրավիրել «Վի Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թարգմանիչ Հրանուշ Մկրտիչի Թախմասյանին (անձնագիր՝ AN 0780981, տրված՝ 22.12.2013թ., 029-ի կողմից, դիպլոմ PB № 013781՝ տրված ԵՊՀ-ի պետական քննական հանձնաժողովի 1990 թվականի հունիսի 22-ի որոշմամբ):

Հրանուշ Թախմասյանն ունի համապատասխան մասնագիտական կրթություն, այն է՝ արևելյան լեզուներ և գրականություն (պարսկերեն), ազատորեն տիրապետում է հայերեն և պարսկերեն լեզուներին, նրա ձեռնհասությունը կասկած չի հարուցում:

Վերոգրյալի հիման վրա, և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածներով և 277-րդ հոդվածի 4-րդ մասով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Սաիդ Ալի Ասդարի Շահբամանիի վերաբերյալ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության 3-րդ բաժնում քննված և մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 84103621 քրեական գործով թարգմանություն իրականացնելու համար հրավիրել «Վի Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թարգմանիչ Հրանուշ Մկրտիչի Թախմասյանին (անձնագիր՝ AN 0780981, տրված՝ 22.12.2013թ., 029-ի կողմից, դիպլոմ PB № 013781՝ տրված ԵՊՀ-ի պետական քննական հանձնաժողովի 1990 թվականի հունիսի 22-ի որոշմամբ):

2. Հրանուշ Թախմասյանին ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված թարգմանչի պարտականություններին և իրավունքներին:

3. Հրանուշ Թախմասյանին նախազգուշացնել քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՀՀ գլխավոր դատախազության քնակչության -
առողջության դեմ ուղղված հանցագործությունների
գործերով վարչության ավագ դատախազ,
արդարադատության առաջին դասի խորհրդական՝




Մ. Հակոբյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները:

Իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝



Հրանուշ Թախմասյան

« 25 » 03 2022թ.

ՈՐՈՇՈՒՄ
թարգմանիչ հրավիրելու մասին

30 մարտի, 2022թ.

ք. Երևան

«Հ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության ավագ դատախազ Հ. Մովսիսյանս, ուսումնասիրելով մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 58205422 քրեական գործը՝

ՊԱՐԶԵՑԻ՝

Թիվ 58205422 քրեական գործը, ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտի քննիչ Հ. Մարտիրոսյանի կողմից 2022թ. մարտի 24-ին կազմված մեղադրական եզրակացությամբ, 2022 թվականի մարտի 25-ին ստացվել է ՀՀ գլխավոր դատախազությունում:

«Հ քրեական դատավարության օրենսգրքի 277-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

«Քրեական դատավարության լեզվին չտիրապետող մեղադրյալին և պաշտպանին հանձնվում են թարգմանչի կողմից ստորագրված մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների հաստատված թարգմանությունները»:

Նկատի ունենալով, որ թիվ 58205422 քրեական գործով մեղադրյալ Արմին Էբրահիմի Փարսավոսուղը չի տիրապետում հայերեն լեզվին, տիրապետում է պարսկերեն լեզվին՝ մեղադրական եզրակացությունը հաստատելու մասին որոշումը հայերենից պարսկերեն թարգմանելու և մեղադրյալին հասկանալի լեզվով հանձնելու նպատակով անհրաժեշտ է որպես թարգմանիչ հրավիրել «Վի Գրուպ» ՍՊ ընկերության թարգմանիչ Հրանուշ Մկրտիչի Թախմասյանին:

Հրանուշ Թախմասյանն ազատորեն տիրապետում է համապատասխան լեզուներին, նրա ձեռնահասությունը կասկած չի հարուցում:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով և 277-րդ հոդվածի 4-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ՝

1. Թիվ 58205422 քրեական գործով թարգմանություն իրականացնելու համար հրավիրել «Վի Գրուպ» ՍՊ ընկերության թարգմանիչ Հրանուշ Մկրտիչի Թախմասյանին /անձնագիր՝ AN 0780981, տրված 22.12.2013թ., 029-ի կողմից/:

2. Հրանուշ Թախմասյանին ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված թարգմանչի պարտականություններին և իրավունքներին:

3. Հրանուշ Թախմասյանին նախազգուշացնել քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

«Հ ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության ավագ դատախազ՝



Հ. Մովսիսյան

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները:

Իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝



Հրանուշ Թախմասյան

« 30 » 03 2020թ.

ՈՐՈՇՈՒՄ
թարգմանիչ հրավիրելու մասին

07 ապրիլի, 2022թ.

ք. Երևան

ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության ավագ դատախազ Հ. Մովսիսյանս, ուսումնասիրելով մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 58207722 քրեական գործը՝

ՊԱՐԶԵՑԻ՝

Թիվ 58207722 քրեական գործը, ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտի քննիչ Հ. Մարտիրոսյանի կողմից 2022թ. մարտի 30-ին կազմված մեղադրական եզրակացությամբ, 2022 թվականի մարտի 31-ին ստացվել է ՀՀ գլխավոր դատախազությունում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 277-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

«Քրեական դատավարության լեզվին չտիրապետող մեղադրյալին և պաշտպանին հանձնվում են թարգմանչի կողմից ստորագրված մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների հաստատված թարգմանությունները»:

Նկատի ունենալով, որ թիվ 58207722 քրեական գործով մեղադրյալ Էսսան Մոհամմադի Ղասեմի Նոշադը չի տիրապետում հայերեն լեզվին, տիրապետում է պարսկերեն լեզվին՝ մեղադրական եզրակացությունը հաստատելու մասին որոշումը հայերենից պարսկերեն թարգմանելու և մեղադրյալին հասկանալի լեզվով հանձնելու նպատակով անհրաժեշտ է որպես թարգմանիչ հրավիրել «Վի Գրուպ» ՍՊ ընկերության թարգմանիչ Հրանուշ Մկրտիչի Թախմասյանին:

Հրանուշ Թախմասյանն ազատորեն տիրապետում է համապատասխան լեզուներին, նրա ձեռնահասությունը կասկած չի հարուցում:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով և 277-րդ հոդվածի 4-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ՝

1. Թիվ 58207722 քրեական գործով թարգմանություն իրականացնելու համար հրավիրել «Վի Գրուպ» ՍՊ ընկերության թարգմանիչ Հրանուշ Մկրտիչի Թախմասյանին /անձնագիր՝ AN 0780981, տրված 22.12.2013թ., 029-ի կողմից/:

2. Հրանուշ Թախմասյանին ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված թարգմանչի պարտականություններին և իրավունքներին:

3. Հրանուշ Թախմասյանին նախազգուշացնել քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում
մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ
հսկողության վարչության ավագ դատախազ՝



Հ. Մովսիսյան

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները:

Իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝



Հրանուշ Թախմասյան

« 07 » 04 2021 թ.

ՈՐՈՇՈՒՄ
թարգմանիչ հրավիրելու մասին

08.04.2022թ.

ք. Երևան

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության (վարչություն) դատախազ Ա.Խաչատրյանս, ուսումնասիրելով №12141916 քրեական գործով հետախուզվող ԽԱՉԻԿ ՉԻՆԱՐԻԿԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ վերաբերյալ վարչությունում առկա փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) գլխավոր դատախազությունը «Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի համաձայն 16.02.2018թ. դիմել է Գերմանիայի Դաշնային Հանրապետության (այսուհետ՝ ԳԴՀ) իրավասու մարմիններին՝ №12141916 քրեական գործով հետախուզվող ԽԱՉԻԿ ՉԻՆԱՐԻԿԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ քրեական հետապնդման ենթարկելու նպատակով ՀՀ իրավասու մարմիններին հանձնելու միջնորդությամբ:

Սկստի ունենալով, որ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի 07.04.2022թ. գրությամբ ԽԱՉԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ հանձնումը ՀՀ իրավասու մարմիններին չի պահանջվելու, անհրաժեշտ է գրությունն ուղարկել ԳԴՀ իրավասու մարմիններին դրա հետագա ընթացքը ապահովելու նպատակով:

«Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի 23-րդ հոդվածի համաձայն՝ «Փաստաթղթերը պետք է ներկայացվեն հայցող կամ հայցվող կողմի լեզվով: Հայցվող կողմն իր ընտրությամբ կարող է թարգմանություն պահանջել Եվրոպայի Խորհրդի պաշտոնական լեզուներից մեկով»:

Սույն հոդվածի կապակցությամբ ԳԴՀ կողմից 01.01.1977թ. արված վերապահման համաձայն՝ հանձնման մասին միջնորդությունը և կից փաստաթղթերը պետք է ներկայացվեն գերմաներեն կամ ԵՄ պաշտոնական լեզուներից որևէ մեկով:

Համաձայն ՀՀ ոստիկանության ԱԿԲ-ի գրության, գերմանական կողմը պահանջել է Գ.Չ. ԳԵՎՈՐԳՅԱՆԻ հանձնման արարողակարգում անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել գերմաներեն թարգմանությամբ:

Սկստի ունենալով այն հանգամանքը, որ հանձնման մասին միջնորդությունը լրացնող տեղեկությունները (տվյալ դեպքում լրացուցիչ երաշխիքները) համարվում են միջնորդությանը կից փաստաթղթեր և այն, որ այդ փաստաթղթերը պետք է ներկայացվեն գերմաներեն կամ ԵՄ պաշտոնական լեզուներից որևէ մեկով, անհրաժեշտություն է առաջացել թարգմանել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի հիշյալ գրությունը՝ ԳԴՀ իրավասու մարմիններին ուղարկելու նպատակով:

Վերոգրյալի հիման վրա, նկատի ունենալով, որ ՍԱԹԵՆԻԿ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱԹՅԱՆԸ համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կապված չի հարուցում, որպիսի պայմանները

համապատասխանում են ՀՀ Վճռաբեկ դատարանի 04.05.2017թ. թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության 83-րդ հոդվածով, «Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի 23-րդ հոդվածով,

ՈՐՈՇԵՑԻ

1. Գ.Զ. ԳԵՎՈՐԳՅԱՆԻ հանձնման մասին միջնորդությունը լրացնող ՀՀ զվխավոր դատախազի տեղակալի գրությունը գերմաներեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել ՍԱԹԵՆԻԿ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱԹՅԱՆԻՆ (անձնագիր BA սերիայի №0387407, ԵՊՀ դիպլոմ Ա № 003927) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:
2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Միջազգային-իրավական
համագործակցության վարչության դատախազ



Ա.Խաչատրյան

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները, իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝
ՍԱԹԵՆԻԿ ՀԱԹՅԱՆ



«08».....09..... 2022թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
թարգմանիչ հրավիրելու մասին

05 ապրիլի, 2022թ.

ք. Երևան

ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազ Վ.Նազարյանս, ուսումնասիրելով թիվ 58209522 քրեական գործն ըստ մեղադրանքի Բալջիտ Սինգիի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 2-րդ մասով,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտում քննված թիվ 58209522 քրեական գործն ըստ մեղադրանքի Բալջիտ Սինգիի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 2-րդ մասով, 2022 թվականի ապրիլի 4-ին մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարան:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«Քրեական դատավարությանը մասնակցող անձինք, բացառությամբ քրեական վարույթն իրականացնող մարմնի, իրավունք ունեն դատարանում հանդես գալու իրենց նախընտրած լեզվով, եթե ապահովվում են հայերեն թարգմանությունը: Քրեական դատավարությանը մասնակցող մեղադրյալին, եթե նա չի տիրապետում հայերենին, դատարանը պարտավոր է պետական միջոցների հաշվին ապահովել թարգմանչի ծառայություններով, բացառությամբ երբ մեղադրյալը ցանկանում է իր հաշվին ապահովել թարգմանությունը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 277-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

«Քրեական դատավարության լեզվին չտիրապետող մեղադրյալին և պաշտպանին հանձնվում են թարգմանչի կողմից ստորագրված մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների հաստատված թարգմանությունները»:

Նկատի ունենալով, որ մեղադրյալ Բ.Սինգիը չի տիրապետում հայերեն լեզվին, տիրապետում է հնդկերեն լեզվին և իր հաշվին թարգմանություն ապահովելու ցանկություն չի հայտնել, ուստի մեղադրական եզրակացությունը հաստատելու մասին որոշումը մեղադրյալին հասկանալի լեզվով նրան հանձնելու համար և նշված փաստաթղթերը հայերենից հնդկերեն թարգմանելու նպատակով անհրաժեշտ է որպես թարգմանիչ հրավիրել «Վի գրուպ» ՍՊԸ-ի թարգմանիչ Մանիկ Խեչոյանին:

Մանիկ Խեչոյանն ունի համապատասխան կրթություն, ազատորեն տիրապետում է համապատասխան լեզուներին, նրա ձեռնհասությունը կասկած չի հարուցում:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածով և 277-րդ հոդվածի 4-րդ մասով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

Բալջիտ Սինգիի վերաբերյալ ՀՀ ԱԱԾ քննչական ղեկարտամենտում քննված թիվ 58209522 քրեական գործով թարգմանություն իրականացնելու համար հրավիրել «Վի գրուպ» ՍՊԸ-ի թարգմանիչ Մանիկ Խեչոյանին /անձնագիր AT0509438, տրված՝ 24.06.2020թ., 007-ի կողմից/:

Մանիկ Խեչոյանին ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված թարգմանչի պարտականություններին և իրավունքներին:

Մանիկ Խեչոյանին նախազգուշացնել քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում
մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ
հսկողության վարչության դատախազ



Վ. Նախարյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները:

Իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ



Մանիկ Խեչոյան

« 05 » 04 2021 թ.

ՈՐՈՇՈՒՄ
թարգմանիչ հրավիրելու մասին

14.04.2022թ.

ք. Երևան

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազի տեղակալ, արդարադատության առաջին դասի խորհրդական Ա.Գ.Կոստանոյանս, ուսումնասիրելով Շվեդիայի Թագավորության (այսուհետ ՇԹ) իրավապահ մարմինների կողմից, այդ քրեական օրենսգրքի 3-րդ գլխի, 6-րդ բաժնի և 4-րդ գլխի 3-րդու 5-րդ բաժիններով նախատեսված հանցանքների համար 2022 թվականի մարտի 14-ից հետախուզման մեջ գտնվող Շ Թ և Իրանի Իսլամական Հանրապետության (այսուհետ ԻԻՀ) քաղաքացի **ՍԵՅԵԴ ՌԱՄՏԻՆ ՍԵՅԵԴ ՌԱԶԻ ԱՄԻՐԼԱՏԻՖԻՆ (SEYED RAMTIN SEYED RAZI AMIRLATIFI)** հանձնման նպատակով կալանավորման վերաբերյալ միջնորդությունը,

ՊԱՐԶԵՑԻ

Հայաստանի Հանրապետության (այսուհետ ՀՀ) ոստիկանության, Երևան քաղաքի վարչության «Հվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի ծառայողները 2022 թվականի մարտի 19-ին ժամը 15:30-ին, Թեհրան-Երևան թիվ 222 չվերթի ժամանումից հետո հայտնաբերվել և բաժին են բերման ենթարկվել Շվեդիայի Թագավորության (այսուհետ ՇԹ) իրավապահ մարմինների կողմից, այդ քրեական օրենսգրքի 3-րդ գլխի, 6-րդ բաժնի և 4-րդ գլխի 3-րդու 5-րդ բաժիններով նախատեսված հանցանքների համար 2022 թվականի մարտի 14-ից հետախուզման մեջ գտնվող Շ Թ և Իրանի Իսլամական Հանրապետության (այսուհետ ԻԻՀ) քաղաքացի **ՍԵՅԵԴ ՌԱՄՏԻՆ ՍԵՅԵԴ ՌԱԶԻ ԱՄԻՐԼԱՏԻՖԻՆ (SEYED RAMTIN SEYED RAZI AMIRLATIFI)**, ում նույն օրը՝ ժամը 1/8:20-ին ձերբակալել են:

ՍԵՅԵԴ ՌԱՄՏԻՆ ԱՄԻՐԼԱՏԻՖԻՆ (SEYED RAMTIN AMIRLATIFI) ձերբակալման վերաբերյալ նախապատրաստված փաստաթղթերը 2022 թվականի մարտի 21-ին փոխանցվել է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազություն:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թվականի մարտի 22-ի թիվ ԵԴ/0203/06/22 որոշմամբ բավարարվել է **ՍԵՅԵԴ ՌԱՄՏԻՆ ԱՄԻՐԼԱՏԻՖԻՆ (SEYED RAMTIN AMIRLATIFI)** նկատմամբ ժամանակավոր կալանավորում կիրառելու միջնորդությունը /կալանքի տակ պահելու ժամկետը լրանում է 2022 թվականի ապրիլի 17-ին՝ ժամը 15:30-ին/:

ՀՀ ոստիկանության «Ինտերպոլ» ազգային կենտրոնական բյուրոյի հաղորդակցման ուղիներով ստացվել է ՇԹ իրավասու մարմինների միջնորդությունը /Extradition request/:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի՝ ՀՀ քրեական դատավարության լեզուն հայերենն է, 2022 թվականի ապրիլի 7-ին միջնորդություն է ներկայացվել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ **ՍԵՅԵԴ ՌԱՄՏԻՆ ՍԵՅԵԴ ՌԱԶԻ ԱՄԻՐԼԱՏԻՖԻՆ (SEYED RAMTIN SEYED RAZI AMIRLATIFI)** հանձնման նպատակով կալանավորման վերաբերյալ, որի ցատական նիստը նշանակվել է 2022 թվականի ապրիլի 12-ին՝ ժամը 15:30-ին, ապա շարունակվել է 2022 թվականի ապրիլի 13-ին՝ ժամը 10:50-ին:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից է 2022 թվականի ապրիլի 13-ին կայացվել է թիվ ԵԴ/0327/06/22 որոշումը՝ **ՍԵՅԵԴ ՌԱՄՏԻՆ ՍԵՅԵԴ ՌԱԶԻ ԱՄԻՐԼԱՏԻՖԻՆ (SEYED RAMTIN SEYED RAZI AMIRLATIFI)** հանձնելու համար կալանավորում կիրառելու մասին:

Հաշվի առնելով, որ ՍԵՅԵԴ ՌԱՄՏԻՆ ԱՄԻՐԼԱՏԻՖԻՆ (SEYED RAMTIN AMIRLATIFI) չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, իսկ Հրանուշ Թախմասյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, և որի ձեռնահաստությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատարանի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑԻ

1. ՍԵՅԵԴ ՌԱՄՏԻՆ ՍԵՅԵԴ ՌԱԶԻ ԱՄԻՐԼԱՏԻՖԻՆ (SEYED RAMTIN SEYED RAZI AMIRLATIFI) հանձնման նպատակով կալանավորման վերաբերյալ 2022 թվականի ապրիլի 13-ի թիվ ԵԴ/0327/06/22 որոշման պարսկերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ իրավիրել Հրանուշ Թախմասյանին (անձնագիր՝ AN սերիայի թիվ 0780981, տրված 22.12.2013թ. 029-ի կողմից, նույնականացման քարտ՝ № 000407163, տրված 27.12.2013թ., 029-ի կողմից, դիպլոմ PB սերիայի թիվ 013781, տրված 05.07.1990թ.) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ,
2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Վարչական շրջանի դատախազի
տեղակալ, արդարադատության
առաջին դասի խորհրդական

Ա. Կոստանդյան

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացվել եմ:

Թարգմանիչ՝

Հրանուշ Թախմասյան

«14» 09 2022թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
թարգմանիչ հրավիրելու մասին

13 ապրիլի, 2022թ.

ք. Երևան

ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազ Վ.Ղազարյանս, ուսումնասիրելով թիվ 58210922 քրեական գործն ըստ մեղադրանքի Մանդիպ Սինգհի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 2-րդ մասով,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտում քննված թիվ 58210922 քրեական գործն ըստ մեղադրանքի Մանդիպ Սինգհի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 2-րդ մասով, 2022 թվականի ապրիլի 13-ին մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարան:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«Քրեական դատավարությանը մասնակցող անձինք, բացառությամբ քրեական վարույթն իրականացնող մարմնի, իրավունք ունեն դատարանում հանդես գալու իրենց նախընտրած լեզվով, եթե ապահովում են հայերեն թարգմանությունը: Քրեական դատավարությանը մասնակցող մեղադրյալին, եթե նա չի տիրապետում հայերենին, դատարանը պարտավոր է պետական միջոցների հաշվին ապահովել թարգմանչի ծառայություններով, բացառությամբ երբ մեղադրյալը ցանկանում է իր հաշվին ապահովել թարգմանությունը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 277-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

«Քրեական դատավարության լեզվին չտիրապետող մեղադրյալին և պաշտպանին հանձնվում են թարգմանչի կողմից ստորագրված մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների հաստատված թարգմանությունները»:

Նկատի ունենալով, որ մեղադրյալ Մ.Սինգհը չի տիրապետում հայերեն լեզվին, տիրապետում է հնդկերեն լեզվին և իր հաշվին թարգմանություն ապահովելու ցանկություն չի հայտնել, ուստի մեղադրական եզրակացությունը հաստատելու մասին որոշումը մեղադրյալին հասկանալի լեզվով նրան հանձնելու համար և նշված փաստաթղթերը հայերենից հնդկերեն թարգմանելու նպատակով անհրաժեշտ է որպես թարգմանիչ հրավիրել «Վի գրուպ» ՍՊԸ-ի թարգմանիչ Մանիկ Խեչոյանին:

Մանիկ Խեչոյանն ունի համապատասխան կրթություն, ազատորեն տիրապետում է համապատասխան լեզուներին, նրա ձեռնհասությունը կասկած չի հարուցում:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածով և 277-րդ հոդվածի 4-րդ մասով,


Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

Մանդիպ Սինգհի վերաբերյալ ՀՀ ԱԱԾ քննչական ղեկարտամենտում քննված թիվ 58210922 քրեական գործով թարգմանություն իրականացնելու համար հրավիրել «Վի գրուպ» ՍՊԸ-ի թարգմանիչ Մանիկ Խեչոյանին /անձնագիր AT0509438, տրված՝ 24.06.2020թ., 007-ի կողմից/:

Մանիկ Խեչոյանին ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված թարգմանչի պարտականություններին և իրավունքներին:

Մանիկ Խեչոյանին նախազգուշացնել քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում
մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ
հսկողության վարչության դատախազ



Վ. Նազարյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները:

Իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ



Մանիկ Խեչոյան

« 13 » 09 2022թ.

ՈՐՈՇՈՒՄ
թարգմանիչ հրավիրելու մասին

26.04.2022թ.

ք. Երևան

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազի տեղակալ, արդարադատության առաջին դասի խորհրդական Ա.Գ.Կոստանյանս, ուսումնասիրելով Կիպրոսի Հանրապետության իրավասու մարմինների կողմից հետախուզվող **ԱԿԲԱՐ ԱԲԴՈՒԼԱՀՈՍԵԻՆ ՔԱՐԻՄԻՆ** (AKBAR ABDWLHOSSEIN KARIMI) վերաբերյալ փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑԻ

Հայաստանի Հանրապետության (այսուհետ ՀՀ) ոստիկանության, Երևան քաղաքի վարչության «Հավարթնոց» օդանավակայանի գծային բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի աշխատակիցների կողմից 2021 թվականի հոկտեմբերի 8-ին ժամը 15:30-ին, հայտնաբերվել այնուհետև ժամը 17:30-ին ձերբակալվել է Կիպրոսի Հանրապետության 371,282-րդ և 283 հոդվածների մեղադրանքով, միջազգային մակարդակով՝ Ինտերպոլի «Կարմիր անկյունով» քարտի տեսքով հետախուզվող **ԱԿԲԱՐ ԿԱՐԻՄԻՆ** (AKBAR KARIMI):

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը՝ **ԱԿԲԱՐ ԱԲԴՈՒԼԱՀՈՍԵԻՆ ՔԱՐԻՄԻՆ** (AKBAR ABDWLHOSSEIN KARIMI) հանձնելու համար կալանավորման ժամկետը երկարաձգելու վերաբերյալ 2022 թվականի ապրիլի 22-ին կայացրել է թիվ ԵԴ/1114/06/21 որոշումը:

Հաշվի առնելով, որ **ԱԿԲԱՐ ԱԲԴՈՒԼԱՀՈՍԵԻՆ ՔԱՐԻՄԻՆ** (AKBAR ABDWLHOSSEIN KARIMI) չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, իսկ Հրանուշ Թախմասյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, և որի ձեռնահասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատարանի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑԻ

1. **ԱԿԲԱՐ ԱԲԴՈՒԼԱՀՈՍԵԻՆ ՔԱՐԻՄԻՆ** (AKBAR ABDWLHOSSEIN KARIMI) հանձնելու համար կալանավորման ժամկետը երկարաձգելու վերաբերյալ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 2022 թվականի ապրիլի 22-ին կայացված թիվ ԵԴ/1114/06/21 որոշման պարսկերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Հրանուշ Թախմասյանին (անձնագիր՝ AN սերիայի թիվ 0780981, տրված 22.12.2013թ. 029-ի կողմից, նույնականացման քարտ՝ № 000407163, տրված 27.12.2013թ., 029-ի կողմից, դիպլոմ PB սերիայի թիվ 013781, տրված 05.07.1990թ.) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ,
2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից

երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով,
կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Վարչական շրջանի դատախազի
տեղակալ, արդարադատության
առաջին դասի խորհրդական

Ա. Կոստանդյան

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ
քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն և
պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով
նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացվել եմ:

Թարգմանիչ՝

Հրանուշ Թախմասյան

« 26 » 04 2021թ.